

դէշ-Պան գծերու հատուածին մէջ:

Զօրասիւնի ճակատին վրայ թուրքերը (չուրջ 3 վաշտ) կը գրաւէին Ենեւէն դէպի հարաւ դռնուող ձիւնապատ լեռնակողը: Զօրասիւնին հրամայուած էր՝ ապրիլ 25-ին յարձակման դիմել եւ տիրել թշնամիի այս դիրքերուն:

Հայկական խումբը կը բռնէր կռուավայրի ճակատողման մասը եւ պաշտօն ունէր՝ առաւօտեան ժամը 4-ին նախաշարձակ լինել թըշ-նամիի աջ թեւին դէմ, ընդգրկելով այն Գիւզելի ձորի կողմէն:

Վերջը պարզուեցաւ, որ զօրասիւնին յանձնուած պաշտօնը իր ուժերէն վեր էր. հակառակ ապրիլ 12-ի եւ 13-ի ընթացքին իր կատարած կարգ մը յարձակումներուն՝ թուրքերը պահպանեցին իրենց դիրքերը:

Հայկական խումբը իր ճակատին վրայ ու-

նեցաւ մասնակի յաջողութիւն ու ապրիլ 28-ին զօրասիւնին տրուած իր հրամանագրին մէջ զնդապետ Օրրազցով կ'ասէր.

«Ենեւ դիւղի մօտ ձիւնապատ լեռնակողմի դէմ ապրիլ 25-ին եւ 26-ին կատարուած յարձակման պահուն Գ. հայկական խումբը կը կռուէր մեծ ոգեւորութեամբ: Առանձնապէս հերոսաբար կը գործէր հրամանատարական կազմը, որը դժբախտաբար գրեթէ ամբողջովին ինկաւ կամ վիրաւորուեցաւ: Ապրիլ 25-ին խումբը հետեւողաբար գրաւեց կարգ մը խըրամներ, որոնցմէ թուրքերը դուրս կը մղուէին կրակով եւ սուլիններով: Հարուածի մոլեգնուութիւնը այնքան ուժգին էր, որ թուրքերը ժամանակ չունեցան ժողովելու իրենց օթիքը, որը ինկաւ հայերու ձեռքը»:

(Շարունակելի)

ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

(1877-1927)

Գրեց՝ Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ

Կէս դար ղլորուեցաւ այն պատմական օրերէն, երբ Ռուսաստանը սրբազան պատերազմ յայտարարեց Թիւրքիային՝ Բալկանեան քրիստոնեայ ազգերը ազատագրելու համար:

1877 թուի ամառուան սկիզբները ոռւս զօրքը շարժուեցաւ օսմանեան կայսրութեան դէմ միաժամանակ եւրոպական եւ ասիական ցամաքի վրայ: 250,000-նոց ահադին զօրք մը ուղղուեց դէպի Բալկանները մեծ իշխան Նիկոլայ Նիկոլայի վիչի առաջնորդութեամբ: Եւ 60,000-նոց բանակ մը դրոհ տուեց դէպի Կարս ու Էրզրում, Լօրիս-Մելիքովի հրամանատարութեան տակ:

Աւելորդ չէ գուցէ յիշատակել յօղուածով մը այս յիսունամեակը եւ վերստին խօսիլ այն փոթորկալից անցքերու մասին, որոնք կէս դար առաջ իրենց ուժգին անդրադարձումներն ունեցան նաեւ հայ կեանքի ու ճակատագրի վրայ...

Պատմութիւնը, անցեալի փորձերը հարկ

է միշտ աչքի առաջ ունենալ՝ ներկան ըմբռնելու եւ ապագայի ծրագիրները նիւթելու համար:

Գրիչը ղիւրութեամբ չի սահիր — բնական յուզմունք մը կը պաշարէ ձեզ՝ այդ զարհուրելի յիսնամեակի անցքերը մտարերելիս — Բոսնիա-Հերցեգովի ապստամբութիւն, բուլղաներու ապստամբութիւն ու կոտորած, ոռւսական համատարած շարժում՝ յօգուտ ցեղակիցներու, ապա պատերազմ, երկա՛ր ու արիւնալի՛ Բալկաններու մէջ եւ կողկասեան ճակատի վրայ, հայ զօրավարներու սիրազորութիւններ, Բուլղարիան՝ ազատագրուած, Լօրիս-Մելիքով՝ յաղթական՝ Կարսի ու Էրզրումի մէջ, ոռւսը չոքած քրիստոնէութեան ու մարդկութեան բարբարոս սոսիի կրծքին, Սան-Սանֆանօ, Ներսէս Վարժապետեան եւ 16-րդ յօղուած, Անդլիա՝ պաշտպան Թիւրքիոյ ամբողջութեան, Բերլինի Վեհաժողով, 61-րդ յօղուած, խանդավառութիւն հայ աշխարհում,